

ԲԻՐՄԱՅԻ ԸԱՅ ԳԱՂԹՈՋԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պատմ. գիտ. դոկտոր Ռ. Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

XIX դարի 70-ական թթ. հայկական մամուլում («Մասիս», «Արարատ», «Արշալույս արարատյան», «Մեղու Հայաստանի» և այլն) հանդիպում են ուշադրությունից զարմանալիորեն վրիպած, շատ հետաքրքիր թղթակցություններ՝ ուղարկված Բիրմայի թագավորանիստ Մանդալայ քաղաքից։ Թղթակիցները նկարագրել են 1875 թ. մարտ ամսին Բիրմայի մայրաքաղաք հասած Նոր Զուլայի հոգևոր առաջնորդ Գրիգորիս արքեպիսկոպոսի ընդունելությունը երկրի թագավոր Մինդոնի (1853—1878) և կառավարության կողմից։

Հետաքրքիր այդ հաղորդումներից իմանում ենք, որ Գրիգորիս արքեպիսկոպոսը ինչ-որ առաքելությանը, 1875 թ. փետրվարի վերջերին մեկնել է Ռանդուս, ուր մնացել է մի քանի օր, ապա տեղի հայ բաժանաչի ուղեկցությամբ, Լրիվայի գետով տասնչորս օր նավարկելուց հետո հասել է մայրաքաղաք՝ Մանդալայ։ Այնտեղ երկրի գահակալի հրամանով հալ եպիսկոպոսին ցույց է տրվել «օտարերկրյա թագավորին և մեծ տերության ղեսպանին վայել ընդունելություն»։ Գրիգորիսին, տեղի հայկական համայնքից բացի, դիմավորել են նաև Բիրմայի կառավարության մի քանի մինիստրներ, բարձրաստիճան պաշտոնյաներ՝ չորս շրեղ զարգարված փղերով, շքախմբով։

Նավից դուրս գալուց հետո հայ բարձրաստիճան հոգևորականին և նրան ուղեկցողներին, ինչպես վկայում է թղթակիցներից մեկը, «նստեցուցին ի վերափղերի, որ զմբեթաշեն հորինեալ և զարդարեալ էր արքայական զարդովք և կերպուսիք», հասցրել են Մանդալայի հայկական եկեղեցին։ Նրան է հատկացվել եկեղեցուն կից բաժանաչի բնակարանը, որը «շինեալ էր թագավորն (Մինդոնը—Ռ. Ա.) 2500 ուռփիա»¹։

Մանդալայ հասնելու հաջորդ օրը էջմիածնից ժամանած հյուրն ընդունվել է թագավորական պալատում։ Ընդունելությանը մասնակցած հայազգի պալատական Մինաս Տեր-նաշատրյանը «Մասիսի» խմբագրությանն ուղարկած նամակում հետևյալ մանրամասնություններն է պատմում այդ ընդունելության մասին. «Մեծ նախարարաց ատենատունն պատրաստեալ էր արտաքույ իրենանց սովորութեանն շքեղաշուք զարդարանոք, ուր ի վերայ ոտի կալին երկու իշխանք՝ Կիվնվուն Մինջին (Ռ. Կաուն, սա նաև Տենա Վունն՝ էր, Բիրմայի ռազմական մինիստրը—Ռ. Ա.), Յանգա Մինջին և այլ ստորին իշխանք ընդ բազմազումար Բրմայից»²։

Մեկ այլ ականատեսի նամակից հայտնի է դառնում, որ Գրիգորիս արքեպիսկոպոսի ընդունելությանը մասնակցել են նաև ալնպիսի խոշոր պետական և քաղաքական գործիչներ, ինչպիսիք են՝ Եվստին Մինջին, Լամշա Մինջին, Քանհա Մինջին (խոսքը երկրի գահաժառանգ Քանաունի մասին է—Ռ. Ա.) և ուրիշներ³։

Փոխադարձ ողջունից, հարց ու փորձից հետո ներքին խորհրդարանի անդամ, նախարար Եվստին Մինջին էջմիածնից ժամանած հյուրին և նրան ուղեկցող հայերի խմբին առաջնորդել և Բիրմայի գահակալին է ներկայացրել այն դաշիճում, «ուր ղեսպան թագուհվոյն Բրիտանացւոց ընդունէին հանդիսիւ Անդ

¹ «Արարատ», էջմիածին, 1876, էջ 225։

² «Մասիս», Կ. Պոլիս, 1876, № 1881։

³ «Արարատ», 1876, էջ 225։

իշխանը հարաւային և հիւսիսային զօրաց պատրաստ էին զօգնականօք ի նշան շքեղաշուք ընդունելութեան Ս. Առաջնորդին»⁴։ Բիրմայի հայերի «ազգապետ» Ս. Մ. Մանուկը, որը թարգմանչի դեր էր ստանձնել այդ հանդիպման ժամանակ, նույնպես նշում է. որ «զայս մեծ պատիւ համարէին և միայն դեսպանաց առնէ թագաւորն»⁵։

Թե ի՞նչ հարցի շուրջն է գնացել զրույցը Մինդոն թագավորի և Գրիգորիս Արքեպիսկոպոսի միջև՝ ոչինչ չի հաղորդվում։ Այս հանդիպումից մի քանի օր անց Գրիգորիսը նորից է հրավիրվել պալատ և ընդունվել թագավորի կողմից։ Զրույցի սկզբում Մինդոնը շատ բարձր է գնահատել հայոց Գևորգ Դ կաթողիկոսի գործունեությունը⁶, ապա անցել է զրույցի բուն թեմային, որի համար էլ, ամենայն հավանականությամբ, կազմակերպվել էր այս ընդունելությունը։

Ինչպես երևում է զրույցի ունկնդրի վկայությունից, «բովանդակութիւն մտացն էր Մինդոնի, միջնորդութեամբն Վեհին (Գևորգ Դ կաթողիկոսի—Ռ. Ա.) շահել զբարեկամութիւն...»⁷։ Տարակուսանք է պատճառում այն հանգամանքը, թե ինչու պետք է Մանդալայից թղթակցություն ուղարկողը կամ «Արարատի» խմբագրությունը զգուշավորություն ցուցաբերած լինեին և չտային այն անունը, որի հետ Հայոց կաթողիկոսի միջնորդությամբ ցանկանում էր բարեկամություն հաստատել Բիրմայի գահակալը։

Հավանաբար Գևորգ Դ-ին շահագրգռելու նպատակով Մինդոնը զրույցի ժամանակ խոստացել է, որ կհովանավորի և կշենացնի Բիրմայի հայկական գաղթօջախը և աշխատավարձ կնշանակի Մանդալայ եկած հայ քահանային, «քանի որ արդարև խեղճ է զրութիւն հայոց»⁸։ Ընդունելության վերջում Մինդոնը հրամայել է «վեհափառ կաթողիկոսի վրա գրություն պատրաստել», որպէսզի Գրիգորիս Սրբազանը մեկնելիս այն հետը տանի⁹։ Հանդիպման ժամանակ Գրիգորիսը ի՞նչ հերթին Մինդոնին է հանձնել Գևորգ Դ-ի անձնական նամակը։

Այս ընդունելության հաջորդ օրը թագավորի պալատի այգում Գրիգորիս արքեպիսկոպոսի և նրան ուղեկցող տեղի մի խումբ հայերի պատվին ճաշկերույթ է տրվել։ Այս անգամ էլ Մինդոնը, «առավել քան զառաջին օրն պատուեց Սրբազանն... յելեալ ի տեղւոջն ուր նստեալ էր, առաւել մերձ Գրիգորիս Արքեպիսկոպոսն նստալ ի վերայ գետնոյ»¹⁰։

Ավելի մոտ նստելով Գրիգորիսին Մինդոնը թարգմանչի օգնությամբ զրույցի է բռնվել իրեն հետաքրքրող ինչ-որ հարցի շուրջ։ Հայտնելով այս, թղթակիցները դարձյալ լռում են զրույցի բովանդակության մասին։ Ընդունելության ավարտին Բիրմայի թագավորը արդեն պատրաստ նամակը հանձնել է Գրիգորիսին՝ Գևորգ Դ-ին հանձնելու համար և նորից խնդրել «միջնորդել վասն բարեկամության»¹¹։

Մարտի 18-ին, նորից չորս զարդարված փղերով, մեծ պատիվներով Գրիգորիս արքեպիսկոպոսին հասցրել են Մանդալայի նավահանգիստ, որտեղից նա անցել է Կալկաթա, այնտեղից էլ՝ Նոր Զուղա։

Ուշագրավ է, որ այս փաստի մասին խոսում են նաև ռուսական արխիվներում պահված առանձին վավերագրեր, Բիրմայի XIX դարի երկրորդ կեսի պատմությամբ զբաղվող ուսումնասիրողների մեծ մասը։ Ընդ որում, նրան-

⁴ «Մասիս», 1876, № 1881։

⁵ Նույն տեղում։

⁶ Նույն տեղում։

⁷ «Արարատ», 1876, էջ 225։

⁸ Նույն տեղում։

⁹ Նույն տեղում։

¹⁰ Նույն տեղում։

¹¹ Նույն տեղում։

յիս ոմանք գտնում են, որ Գրիգորիսը Բիրմա է եկել ոչ թե մեկ, այլ մի քանի անգամ¹²։

Հայտնի է, որ դեռևս ինն ժամանակներից էջմիածնի, Երուսաղեմի, Նոր Զուլայի, Կոստանդնուպոլսի հայոց հոգևոր կենտրոնները հաճախ էին նվիրակներ ուղարկում աշխարհի հայաշատ այս կամ այն երկիրը։ Նպատակը մեկն էր. ալցելը գաղթօջախների մեծահարուստներին, լինել ազգային կազմակերպություններում ու եկեղեցիներում, հանգանակություն կատարել այս կամ այն նպատակների համար, քարոզներով, հորդորներով մխիթարել օտարության մեջ գտնվող հայերին և վերադառնալ։ Նման այցերի ժամանակ շատ դեպքերում նվիրակները հալածվել, կողոպտվել, երբեմն նաև սպանվել են, իսկ այս դեպքում՝ նման ընդունելություն։ Մինչդեռ Բիրսայի պատմությունից հայտնի է, որ և վրոպական պետությունների դեսպաններն ու պատվիրակությունները, որոնք հասնում էին Մանդալայ կամ Ռանգուն, շարաքներ, անգամ ամիսներ էին սպասում, մինչև արժանանում էին բիրմական կառավարության, և միայն հազվադեպ՝ թագավորի, ընդունելությանը։

Գրիգորիս արքեպիսկոպոսի Բիրմա կատարած այցը նկարագրող թղթակիցներից և ոչ մեկը ոչ մի խոսք չի ասում այն մասին, թե նա Ռանգունում կամ Մանդալայում զբաղվել է որևէ ազգային հարցով։ Ստացվում է այնպես, որ էջմիածնի նվիրակի այցը Բիրմա ունեցել է մի հիմնական նպատակ՝ հանդիպել Բիրսայի թագավոր Մինդոնին, զրույց ունենալ նրա հետ ինչ-որ հարցի շուրջ, հանձնել կաթողիկոսի հանձնարարական նամակը և թագավորի նամակ-հանձնարարականով վերադառնալ։

Զարմանք է պատճառում նաև այն հանգամանքը, որ Բիրմայի գահակալը, այն էլ իր պալատում, «կարի զգուշությամբ խոսեցավ» հիշյալ բարեկամության մասին։ Եվ, վերջապես, ո՞վ էր ոմն «Պարոն Մինասը», որի միջոցով, նախքան Գրիգորիսի Բիրմա գալը, Մինդոնը էջմիածնի կաթողիկոսին «գիր» է ուղարկել, ճանապարհածախս տվել՝ այդ գիրը Մանդալայից տեղ հասցնելու համար։ Ի՞նչ էր այդ «գիր» բովանդակությունը։

Այս ինչունների պատասխանելու մեր պրպտումները, բարեբախտաբար ավարտվեցին հաջողությամբ։ Երևանի, Սոսկվայի մի շարք արխիվներում, ժամանակի մամուլում, Բիրմայի XIX դարի պատմությանը նվիրված ուսումնասիրություններում, փաստաթղթերի ժողովածուներում հայտնաբերվեցին հետաքրքիր բազմաթիվ փաստեր, որոնք միաբերան խոսում են այն մասին, որ Բիրմայի Մինդոն թագավորը և կառավարությունը աշխատել են օգտագործել Բիրմայում ապրող, բացահայտ ռուսական կողմնորոշում ունեցող հայերի կապերը և մի քանի այլ ճանապարհներից բացի նաև Հայոց Գեորգ Դ կաթողիկոսի միջնորդությամբ դիվանագիտական կապեր հաստատել և դաշինք կնքել Ռուսաստանի հետ՝ օրավուր աճող անգլիական վտանգի դեմ։

Այստեղից էլ պարզ է դառնում, թե ինչու է նման շուքով և «դեսպանին վալել մեծարանքներով» ընդունվել Գրիգորիսը բիրմական կառավարության կողմից։ Նա Բիրմայում ընդունվել է առաջին հերթին ոչ որպես էջմիածնից եկած հոգևորական։ Որ դա իրոք այդպես էր, երևում է նաև Բիրմայի արտաքին գործերի մինիստրի՝ Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրին ուղարկած նամակներից¹³։

Բիրմական գահակալներ Մինդոնի (1853—1878) և նրա որդի Տիբոյի (1878—1885) կառավարման ժամանակաշրջանում արտակարգ բարդ էր երկրի արտաքին քաղաքական դրությունը։ Անգլիական գաղութարարները, որոնք տեղի-բիրմական առաջին (1824—1826 թթ.) և երկրորդ (1852 թ.) պատերազմ-

¹² М. Г. Козлова. Россия и страны Юго-Восточной Азии. 1972, М., с. 158.

¹³ Архив внешней политики России МИД СССР (АВПР), ф. Среднеазиатский, стол. д. 987, л. 2.

ների ժամանակ զավթել էին Բիրմայի ծովափնյա շրջանների մեծ մասը, պատ-
րաստվում էին իրականացնել նրա լրիվ գաղութացումը:

1860-ական թթ. Բիրման նոր զինվածների դիմեց և անգլիացիների հետ
կնքեց մի շարք նոր, ստրկացուցիչ պայմանագրեր: Սակայն շուտով Մինդոնը և
նրա արքունիքը վերջնականապես համոզվեցին, որ միայն զինվածներով ոչնչի-
չեն հասնի և սկսեցին անգլիական ագրեսիայի դեմ ուժեղ դաշնակից փնտրել:
Այդ նպատակով եվրոպա ուղարկված բիրմական դեսպանություններից և ոչ
մեկը հաջողության չհասավ¹⁴:

Անգլիացի ուսումնասիրող Հարվեյը նկատել է, որ այդ դեսպանությունների
նախաձեռնողները, երբեմն նաև ղեկավարները, Բիրմայում ապրող եվրոպացի-
ներն էին լինում կամ էլ՝ Եվրոպական և արևելյան մի քանի լեզուների տիրա-
պետող, այդ երկրներին քաջածանոթ հայերը¹⁵:

1874 թ. սկզբներին Մինդոնը առանձին դեսպանություն ուղարկեց նաև
Պարսկաստան՝ երկրի նշանավոր ղեկավարներ Սաեդոջի Մինխլա Զոռդին
Յազայի և Ավեն Շոեդաուն Տիրին Նորադայի ղեկավարությամբ: Ինչպես Պարս-
կաստանի արտաքին գործերի մինիստր Միրզա Հուսեյն Խանի հետ բանակցու-
թյուններ վարելու ընթացքում, այնպես էլ Նասը էդ-Ռին շահի ընդունելության
ժամանակ Բիրմայի դեսպանները մի քանի անգամ խնդրել են, որ պարսկա-
կան կառավարությունը միջնորդի դեր կատարի ռուս-բիրմական դաշինք ստեղ-
ծելու գործում¹⁶:

Բիրմական պատվիրակությունը հանդիպումներ է ունեցել նաև Թեհրանի
ռուսական դեսպանորդ Ա. Ֆ. Բեգերի հետ: Այդ հանդիպման վերաբերյալ զե-
կուցագրում դեսպանորդը հայտնել է, որ բիրմացիները «ամեն կերպ ուզում են
պաշտպանություն խնդրել Նորին մեծություն կայսրից՝ անգլիական ներխու-
ժումների դեմ»¹⁷:

Այստեղ մեզ համար կարևորն այն է, որ բիրմական պատվիրակությանը
Պարսկաստան գնալիս ուղեկցել, կառավարությանը ներկայացրել և թարգմա-
նի դեր են կատարել Բիրմայում ապրող նորջուղայեցի հայերը¹⁸: Բիրմական
դեսպանության նկատմամբ Պարսկաստանում հայերի կողմից ցուցաբերած
չեքոմ ընդունելության և աջակցության մասին է խոսում Թեհրանում ռուսական
դեսպանը¹⁹: Հավանաբար քաղելով բիրմական աղբյուրներից նույնն է հաստա-
տում նաև Բիրմայի պատմության հնդիկ ուսումնասիրող Ա. Բաներջին²⁰:

Առաջին թուղթիկ տեղեկությունները Բիրմայի մասին Ռուսաստան են
հասել ռուս նշանավոր ճանապարհորդ Աֆանասի Նիկիտինի միջոցով, որը
տունդարձի ճանապարհին անցել է հարավային Բիրմայով, սակայն նրա ուղե-
գրությունը հրատարակվել է միայն 1853 թ.: Ինչպես գրում են հարցի մասնա-
գետները, մինչև անգլո-բիրմական առաջին պատերազմը Ռուսաստանում ղեռնա-
ամբողջական պատկերացում չունեին Բիրմայի մասին: Միայն դարի կեսերից
հետո մասնակի հետաքրքրություն առաջացավ Բիրմայի նկատմամբ: Բիրմայի
վերաբերյալ լուրերը Ռուսաստան էին հասնում եվրոպական թերթերի միջոցով:
Ինչ վերաբերում է Բիրմայում Ռուսաստանի մասին իմացությանը, ապա ռուս-
բիրմական հարաբերություններին անդրադարձած հեղինակները գրեթե միաբե-
րան գտնում են, որ Ռուսաստանի և ռուս ժողովրդի մասին առաջին տեղեկու-
թյունները Բիրմա են հասցրել տեղի հայերը, ընդ որում բավականին վաղ ժա-
մանակներից սկսած:

¹⁴ М. Г. Козлова. Английское завоевание Бирмы. М., 1958, с. 168—184.

¹⁵ G. E. Harvey. Outline of the Burmese history, Bombay, 1919, p. 202.

¹⁶ АВПР, ф. Главный архив, 1—8, 1875—1876 гг., д. 14, л. 41, 42.

¹⁷ АВПР, ф. Среднеазиатский стол, д. 987, л. 1.

¹⁸ D. G. E. Hall. Burma. London, 1956, p. 400.

¹⁹ Политика капиталистических держав и национально-освободительное движе-
ние в Юго-западной Азии (1871—1917), документы, материалы. Ч. II, М., 1965,
док. № 25, с. 68—69.

²⁰ A. Ch. Banerjee. Annexation of Burma. Calcutta, 1944, p. 72.

Իսկ թե որ ժամանակից են սկսվել բիրմական կառավարության՝ Ռուսաստանի հետ հարաբերություններ հաստատելու փորձերը, դժվար է ասել, թեև հայտնի է, որ կաթոլիկ եպիսկոպոս Պ. Աբբոնան (որը 1846 թ. հաստատվել էր Բիրմայում և քաջատեղյակ էր երկրում տեղի ունեցող իրադարձություններին) 1855 թ. Պեդուի կոմիսար Արթուր Ֆելերին հայտնել է, որ այդ հարցում Բիրմայում ապրող հայերը մի քանի անգամ առաջարկել են իրենց ծառայությունները²¹:

Խոսելով ռուս-բիրմական հարաբերությունների սկզբնավորման մասին, Մ. Գ. Կոլլովան նշում է. «Եթե Մինդոն թագավորը և նրա պալատը Եվրոպայի և ԱՄՆ-ի մասին տեղեկություններ էին ստանում կաթոլիկ քարոզիչների միջոցով, ապա այն ուղին, որով Ռուսաստանի վերաբերյալ լուրեր էին հասնում և տարածվում Բիրմայում, դա բավական մեծաթիվ հայկական առևտրական համայնքն էր: XVII—XVIII դդ. հայերը նշանակալից դեր էին խաղում Բիրմայում: Նրանք առևտուր էին անում օտարերկրացիների հետ, կատարում էին դիվանագիտական տարբեր հանձնարարություններ (հատկապես Մինդոնի օրոք): Ղրիմի պատերազմի ժամանակ Բիրմայի հայկական գաղթօջախը տրամադրված էր հակաանգլիականորեն»²²:

XIX դարի 60—80-ական թթ. ռուս-բիրմական հարաբերությունների մասին խոսելիս Լ. Ն. Ժուրավլովան մի շարք անգամներ անդրադարձել է բիրմահայ գաղթօջախի խաղացած դերին: Նա նույնպես գտնում է, որ Բիրմայում Ռուսաստանի մասին առաջին տեղեկությունները ամենայն հավանականությամբ ստացվել են դեռևս 1612 թ. Ռանգունում հաստատված հայերից: «Հայկական առևտրական համայնքը, որի անդամները ամեն տեսակի աջակցություն էին ցույց տալիս բիրմացիներին քաղաքաշինության մեջ, առևտրում, տարբեր տեսակի դիվանագիտական հանձնարարություններ էին կատարում, Բիրմայում հանդիսանում էին Ռուսաստանի վերաբերյալ տեղեկությունների աղբյուր»²³: «Նրանց օգնությամբ, — շարունակում է Լ. Ն. Ժուրավլովան, — Մինդոնը փոխ-հարաբերությունների մեջ մտավ էջմիածնի հայոց եկեղեցու հոգևոր առաջնորդի հետ: Մի կողմից Բիրմայի թագավորի և արտաքին գործերի մինիստրի, մյուս կողմից հայոց Գևորգ Դ կաթողիկոսի միջև այդ տարիներին գրագրություն սկսվեց»: Լ. Ժուրավլովան հայտնում է նաև այդ գրագրության բովանդակությունը: Բիրմացիները հայոց կաթողիկոսին ուղարկած նամակներում «Ռուսաստանի հետ մերձեցման և դաշինք կնքելու ցանկություններ էին հայտնում: Նրանք խնդրում էին կաթողիկոսին իրենց այդ տրամադրությունների մասին տեղյակ պահել ռուսական կառավարությանը»²⁴:

Նույն Լ. Ն. Ժուրավլովան սեկ այլ անգամ գրում է. «Ռուս-բիրմական հարաբերություններ հաստատելու համար XIX դարի 70-ական թթ. բիրմացիները գործում էին հայկական համայնքի միջոցով, քանի որ հայ վերաբնակիչները դեռևս առաջներում բիրմական կառավարությանը առաջարկում էին իրենց աջակցությունը ռուս-բիրմական բարեկամական կապեր հաստատելու գործում»²⁵:

Ռուս-բիրմական հարաբերությունների սկզբնավորման պատմությանը առանձին ուսումնասիրություն նվիրած Օ. Ֆ. Սոլովյովը նույնպես նշում է, որ

²¹ D. G. E. Hall. The Dalhousie—Phayre Correspondence 1852—1856. London, 1932, p. 92, doc. № 117, 118.

²² М. Т. Козлова. Указ. соч., с. 193.

²³ Л. Н. Журавлева. Внешняя политика Бирмы и экспансия капиталистических держав в 60-х—первой половине 80-х годов XIX века. Саратов, 1981, с. 81.

²⁴ Նույն տեղում:

²⁵ Л. Н. Журавлева. Колониальная экспансия капиталистических государств в Бирму в 70—80-х годах XIX в.—Ученые записки Вологодского гос. пед. института. Т. 14, Вологда, 1954, с. 74.

«առաջին տեղեկությունները Ռուսաստանի մասին Բիրմա են հասել հնդկահայերի միջոցով, որոնք դեռևս XVI դարում սկսել էին հաստատվել Բիրմայում»²⁶, ևսածն ավելի հավաստի դարձնելու համար Օ. Ֆ. Սոլովյովը իր ուսումնասիրության մեջ բերել է Ջ. Հարվեյի վկայությունը այն մասին, որ «XVII դարի սկզբից Ռանգունում կային հաստատված հայեր, որոնք 1612 թ. կառուցել էին իրենց եկեղեցին: Հայերը համակերպվել էին տեղական պայմաններին, նրանցից շատերը հրավիրվել էին կառավարության մեջ պատասխանատու պաշտոններին»: «Բիրմական կառավարության մեջ պաշտոնավարող այս հայերն էին,— ենթադրում է ուսումնասիրողը,— որ բիրմական կառավարությանը առաջարկում էին իրենց ծառայությունները՝ ռուս-բիրմական դաշինք ստեղծելու գործում»²⁷:

Ռուսաստանի և ռուսների մասին առաջին լուրերը Բիրմա հասցնելու, ինչպես նաև հայերի կողմից ռուս-բիրմական դաշինք ստեղծելու ձգտման մասին են խոսում նաև սովետական ուսումնասիրողներ Ի. Վ. Մոսեյկոն և Ա. Ն. Ուզյանովը: Անդրադառնալով Ռուսաստանի հետ մերձենալու Բիրմայի կառավարության ձգտմանը, նրանք գրում են. «Մանդալայի ազդեցիկ հայկական համայնքը, որը վճռական դեր էր խաղում Բիրմայի առևտրում, նույնպես աշխատում էր հանուն Ռուսաստանի հետ դաշինքի»²⁸:

Սովետական մեկ այլ ուսումնասիրող՝ է. Լուկյանովը, հավանաբար տեղեկություններ քաղելով եվրոպական աղբյուրներից, անդրադարձել է ռուս-բիրմական հարաբերություններ հաստատելու փորձերում հայերի խաղացած դերին: Նա գրում է. «XIX դարի 50—70-ական թթ. բնորոշ են բիրմական կառավարության ձգտմամբ՝ դաշնակից գտնել նվրդալից... այդ ժամանակ հայերն ակտիվ մասնակցություն էին ցուցաբերում Ռուսաստանի և Բիրմայի միջև բանկամական կապեր հաստատելու գործում: 1850-ական թթ., երբ Բիրման հուսով էր, որ Ղրիմի պատերազմում պարտություն կկրի Անգլիան, Բիրմայում ասորող հայերից մեկն իր ծառայությունն առաջարկեց Մինդոնին՝ նրա անունից Ռուսաստան մեկնել բարի կամքի միսիայով: 1870-ական թթ. ակտիվ գրագրություն էր սկսվել Բիրմայի և Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրությունների միջև և այդ գործում ակտիվ մասնակցություն ունեցավ արքեպիսկոպոս Գրիգորը»²⁹:

Մեզ հետաքրքրող հարցին անդրադարձել են նաև Լ. Խ. Տեր-Մկրտչյանն ու Լ. Կ. Մկրտչյանը³⁰, Ն. Ա. Խալֆինը³¹:

Ինչպես երևում է մեզ հասած հավաստի վկայություններից, հայերը Ռուսաստանի վերաբերյալ սովորական լուրեր տարածողներ և տեղեկություններ տվողներ չէին միայն: Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միանալուց հետո «Բիրմայի հայկական համայնքի անդամները երկրի կառավարող անձանց մոտ հակաանգլիական տրամադրություններ էին ստեղծում և Բիրման անգլիացիներից ազատագրելու հույսը կապում էին Ռուսաստանի հետ»³²:

Հետաքրքիր է, որ Բիրմայում հայերի կողմից հակաանգլիական տրամադրություններ տարածելը և Ռուսաստանի օգնությամբ Հնդկաստանը և Բիրման, ազատագրելու ձգտումը նկատել են նաև անգլիացիներն ու մյուս եվրոպացիները:

26 О. Ф. Соловьев. Отношения между Россией и Бирмой (70-е годы XIX века).—Советское востоковедение, 1950, № 4, с. 121.

27 Նույն տեղում:

28 И. В. Можейко, А. Н. Узянов. История Бирмы. М., 1970, с. 158.

29 է. Լուկյանով. Հայերը Բիրմայում.—«Սովետական Հայաստան» ամսագիր, Երևան, 1962, № 2, էջ 35:

30 Л. Х. Тер-Мкртчян, Л. К. Мкртчян. Из истории армянской общины в Бирме.—Народы Азии и Африки. 1961, № 3, с. 116.

31 Н. А. Халфин. Английская колониальная политика на Среднем Востоке. Ташкент, 1957, с. 151.

32 Տե՛ս, օրինակ, Политика капиталистических держав..., док. № 31.

Պաշտոնական այցով XIX դարի 50—70-ական թթ. Ռանգունում, Մանդալայում և բիրմական մյուս քաղաքներում եղած անգլիական միսիոներին ղեկավարները Մադրաս և Կալկաթա ուղարկած իրենց զեկուցագրերում մի քանի անգամ հայտնել են հայերի շեշտված հակաանգլիական տրամադրությունները մասին, միաժամանակ նշել, որ նրանք լուրեր են տարածում, թե «հաստատ գիտեն, որ շատ շուտով ռուսական բանակները ներխուժելու են հյուսիսային Հնդկաստան և Բիրման ազատագրելու են անգլիացիներին»³³:

Այդ լուրերն ուժեղացան Ղրիմի պատերազմի տարիներին (1853—1856 թթ.):

1854 թ. ապրիլի 30-ին Թ. Սպիրսը, Ա. Ֆաբերին Կալկաթա ուղարկած մի նամակում հայտնելով բիրմական արքունիքում գոյություն ունեցող հակաանգլիական տրամադրությունների մասին, նշում է, որ ինչպես այդ, այնպես էլ Ղրիմի պատերազմում անգլիացիների պարտության լուրերը Բիրմայում տարածում են անգլիացիների թշնամի հայերը³⁴:

Անգլիական դեսպանության ղեկավար Ա. Ֆրայերը, 1855 թ. օգոստոսի 31-ին գեներալ-նահանգապետ Զ. Ռ. Դալհուզիին Բիրմայից ուղարկած գաղտնի զեկուցագրերից մեկում նկատել է, որ «Բիրմայում ապրող հայերը և հնդիկները համակրում են ռուսներին և ցանկանում են, որ նրանք ներխուժեն Հնդկաստան և Պեգուն վերադարձնեն Բիրմային»³⁵: Ա. Ֆրայերը Մանդալայում վարած բանակցությունների ժամանակ համոզվել է, որ Բիրմայի հայերը ոչ միայն անբարյացակամորեն են տրամադրված Անգլիայի նկատմամբ, այլև լսել է, որ ռուսների հետ հարաբերություններ ստեղծելու նպատակով հատուկ միսիա է ուղարկվել Ռուսաստան: Տեղեկացնելով այս մասին, նա միաժամանակ հայտնել է իր կասկածը, որ Բիրմայի հայ զաղթօջախներում կարող են ռուսական գործակալներ լինեն, որի մասին գաղտնի հարցում է արել արքունիքի եվրոպացի ծառայողներին³⁶:

XIX դարի 70-ական թթ. Բիրմայում եղած ռուս ճանապարհորդներ Պ. Ի. Պաշինոն և Ի. Պ. Մինսկը նույնպես վկայում են, որ Բիրմայում, իրոք, Ռուսաստանի նկատմամբ համակրանք կա: Հետաքրքիր է Պ. Պաշինոյի հայտնածը այն մասին, որ Մինդոնը զրույցի ժամանակ իրեն ասել է, թե ռուս-բիրմական դաշինք ստեղծելու միջնորդության խնդրանքով ինքը դիմել է նաև Հայոց կաթողիկոսին³⁷: Ի. Մինսկը իր հուշերում գրում է, որ ինքը ականատես է եղել, թե ինչպես ռուս-բիրմական դաշինք ստեղծելու միջնորդության խնդրանքով Մինդոնը թագավորական կնիքով կնքված նամակ է հանձնել Բիրմա ժամանած «հայ լուսավորչական եկեղեցու արքեպիսկոպոս Գրիգորին»՝ Հայոց կաթողիկոսին հանձնելու համար³⁸: Նույնն է հաստատվում նաև Ռուսաստանի ռազմական գործերի մինիստր Դ. Ա. Միլյուտինին ուղարկած մի զեկուցագրում³⁹:

Բիրմայի արտաքին գործերի մինիստր Մինչի Մինդիի՝ 1876 թ. Ռուսաստանի կանցլեր Ա. Մ. Գորչակովին ուղարկած մի նամակում նա հայտնում է, որ իր թագավորը միշտ էլ ցանկություն է ունեցել բարեկամական կապեր հաստատել Ռուսաստանի հետ: «Բիրմայի թագավորը իր ալս միտքը հայտնել է նաև

³³ D. G. E. Hall. The Dalhousie—Fhayre Correspondence 1852—1856, № 117, 237, p. 370, 371.

³⁴ Նույն տեղում, նամակ № 181, էջ 281:

³⁵ Նույն տեղում, նամակ № 237, էջ 370—371:

³⁶ H. Yule. A Narrative of the Mission to the Court of Ava in 1855 together with the Journal of Arthur Faeyer. London—New York, 1968, p. XX.

³⁷ П. П. Пашин о. Бирманский император Тибо.—Гражданин. СПб., 1878, № 20—22, с. 23; Колосья. СПб., 1886, № 2, с. 40.

³⁸ И. П. Миняев. Англичане в Бирме.—Вестник Европы, СПб., 1887, т. 6, № 11, с. 187.

³⁹ ЦГВИА, ф. 431, д. 54, л. 10, 11.

Բիրմա հասած ռուսական երկու քաղաքացիներին՝ Վերչայես,— գրում է նա,— ընթացիկ տարվա մարտ ամսին Մանդալայ ժամանեց Նորին սրբություն Հայոց արքեպիսկոպոս մոնսինեոր Գրիգորին, Նորին սրբություն Հայոց պատրիարքի նամակաբերը։ Նրան նույնպես ցույց տրվեցին մեծ պատիվներ։ Ես նրան եմ հանձնել իմ անձնական նամակը Ռուսաստանի սրբազան պատրիարքին⁴⁰ հանձնելու համար, որի մեջ ես կրկնել եմ իմ այն բարի ցանկությունները, որոնք արտահայտել եմ իմ նախկին նամակներում»⁴¹։

Թե՛ եվրոպական, թե՛ սովետական ուսումնասիրողները (Մ. Գ. Կոդլովա⁴², Տ. Պ. Լուցկայա⁴³, Լ. Ն. Ժուրավլյովա⁴⁴, Օ. Սոլովյով⁴⁵ և ուրիշներ), որոնք անդրադարձել են ռուս-բիրմական հարաբերությունների սկզբնավորմանը, գրեթե միաբերան խոսում են Գրիգորիս արքեպիսկոպոսի Բիրմա կատարած այցի (ոմանք գտնում են՝ այցերի) մասին։

Մինդոնի և նրա պալատի կողմից Գրիգորիս արքեպիսկոպոսի ընդունելության ակնատեսը հայտնում է, որ այդ ընդունելությանը, ի թիվս բիրմական կառավարության մյուս բարձրաստիճան անդամների, ներկա էր նաև «պարոն Մինասը, որը ժամանակներ առաջ թագավորեց Վեհի (Գեորգ կաթողիկոսի— Ռ. Ա.) անունով մի գիր էր ստացել և 500 ռուպու արժողությամբ մի հակինթ. որը Մինասը ծախել ճանապարհածախս էր դարձրել էջմիածին դնալ-գալու համար»⁴⁶։ Որ իրոք, հատուկ առաքելությամբ Մանդալայից էջմիածին է հասել Բիրմայի հայազգի պալատական Մինաս Տեր-Խաչատրյանը, հայտնի է նաև «Մեղու Հայաստանի» և «Մասիս» թերթերում հրատարակված հաղորդումներից։ Ավելին, էջմիածնից Բիրմա տունդարձի ճանապարհին «Մեղու Հայաստանի» թերթի թղթակիցը հավանաբար հանդիպել է Թիֆլիսում «Բիրմայի կայսեր մեծ պալատական պարոն Մինաս Տեր-Խաչատրյանին» և զրույց ունեցել նրա հետ։ Թերթը հրապարակել է այդ զրույցի մանրամասն բովանդակությունը, որ հետաքրքիր շատ նորություններ է պարունակում մեզ հետաքրքրող հարցի վերաբերյալ։

Զրույցի սկզբում բիրմահայ պալատականը ասել է, որ ինչպես Հնդկաստանի հայերը «յուրյանց նյութական հարստությամբ և բնական ձիրքով մեծ հարգ գտան Հնդկաստանի շատ ռաջաների և նաբոբների դռանը այնպես, որ հայ անունը Հնդկաստանի մեջ համաշափ եղավ «խելոք» և «ճարպիկ» բառերի հետ, սույն նշանակությունն ստացան ահա և Բիրմաստանի փոքրաթիվ հայերը Բիրմայի թագավորի դռանը», որոնք, հեռու մնալով անգլիական քաղաքակրթության ազդեցությունից, անադարտ են պահում իրենց ազգային և բարոյական նկարագիրը⁴⁷։ Չնայած փոքրաթիվ լինելուն, զրույցի ժամանակ նկատել է Մ. Տեր-Խաչատրյանը, հայությունը «վիճակված է նշանավոր դեր խաղալ Բիրմայի երկրում»⁴⁸։

Խոսելով Բիրմայի հայ գաղթօջախների անցյալի մասին, Մինաս Տեր-Խաչատրյանը հիշել է, որ Բիրմայում հայերի գտնվելը նորություն չէ։ Նրանք այդ երկրում ապրում են հին ժամանակներից և միշտ էլ եղել են նրա հավատարիմ

⁴⁰ Այստեղ սխալմունք կա, որը հավանաբար թարգմանչինն է։ Նախ՝ Հայոց պատրիարքի նամակաբերը պետք է նույն պատրիարքին ուղղված նամակը հետ բերեր և հետո, հիշյալ ժամանակ Ռուսաստանում պատրիարքություն չկար, երկրի եկեղեցական գործերը ղեկավարում էր Սրբազան Սինոդը։

⁴¹ М. Г. Козлова. Английское завоевание Бирмы, с. 191.

⁴² Նույն տեղում։

⁴³ Т. П. Луцкая. Русские путешественники по Бирме (конец XIX в.).—В сб.: Историкография и источниковедение стран Азии и Африки. Л., 1868, с. 107.

⁴⁴ Л. Н. Журавлева. Указ. соч., с. 81.

⁴⁵ О. Ф. Соловьев. Указ. соч., с. 18.

⁴⁶ «Արարտ», 1876, էջ 225։

⁴⁷ «Մեղու Հայաստանի», 22 փետրվարի 1875։

⁴⁸ Նույն տեղում։

ու նվիրյալ քաղաքացիները: Իր ասածը հաստատելու համար նա բերել է Գրիգոր Ալվազյանի օրինակը, «որ ժամանակին եղել է Բիրմայի շորս եպարքոսներեն մին..., այնքան մտերիմ կայսեր հետ (խոսքը Բիրմայի թագավոր Ալուանպայի (1752—1760) մասին է—Ռ. Ա.), որ նորին մեծությունը եղբայրն էր կոչվում»: «Բիրմայում պակաս հուշակ չի ունեցել,—շարունակել է Բիրմայի պալատականը,—նաև Սարգիս Մանուկյանը, որը հսկայական դրամական օգնություն է ցուց տվել բիրմական կառավարությանը անգլո-բիրմական առաջին պատերազմի ժամանակ և այլն»⁴⁹: Զրույցի ընթացքում Մինաս Տեր-հաշատրյանը անդրադարձել է նաև Բիրմայում ապրող անգլիացիներին, համեմատելով նրանց բիրմահայերի հետ: Նա շեշտել է, որ «անգլիացիք սիրելի չեն Բիրմայում, որովհետև նորանցից վախենում են բիրմացիք, մի գուցե ժամանակին տիրապետեն նոքա յուրյանց երկրին, որպես մի փոքր առաջ ծովեզրա մասերին (Մարդաբան և Արաբական ծովեզրյա նահանգները—Ռ. Ա.): Իսկ հայերը,—շարունակել է Բիրմայից եկած հյուրը,—կարողացել են գրավել Բիրմայի համակրությունը և լայերից վախենալու տեղիք չունեն նոքա, ուրեմն մեծ ասպարեզ կա հայերի առաջ Բիրմայում և մեծ պարտք»⁵⁰:

«Մեղու Հայաստանին» անդրադարձել է նաև Բիրմայի հայ պալատականի և անապարհորդության նպատակին: «Բիրմայի կայսրը վաղուց անտի փափազում էր բարեկամական հարաբերություններ սկսել վեհափառ կաթողիկոսի հետ: Այս նպատակով քանիցս անգամ նորին մեծությունը առանձին հանձնարարական նամակներ է տված հայ անցվորական քահանաներին վեհափառության հանձնելու համար, բայց ոչ մինը նորանցից չի կատարել յուր հանձնարարությունը, նամակները տեղ չեն հասել և ճանապարհածախսներն, որն առատաձեռնությունը տվեալ է նոցա կայսրը ապարդյուն են անցել: Դա է պատճառը, որ Բիրմայի թագավորն իր պալատական մեծ պարոն Մինաս աղային առ վեհափառ կաթողիկոսն է ուղարկել առանձին նամակով...»⁵¹:

Ինչպես երևում է, Մինդոնի պատվիրակը «Մեղու Հայաստանի» թերթի աշխատակցին չի հայտնել Բիրմայի գահակալի՝ Հայոց կաթողիկոսին ուղարկած նամակի բովանդակությունը, «նամակի պարունակությունը, ինչպես նաև կայսեր դիտավորությունը նորին վեհափառության հետ բարեկամանալու վերաբերյալ մեզ անհայտ են»: «Այսքանը,—ենթադրել է թղթակիցը,—կարող ենք ասել, որ կայսրը խնդրում է նշանակել մի բանիբուն հայ վարդապետ, որն ուսանելով կարողանա միջնորդել կայսեր և վեհափառի հարաբերությանը: Վարդապետի ճանապարհածախսքը, ռոճիկը, նորա ապրուստը հանձն է առնում կայսրը: Բացի այն նա խոստանում է մի գումար տալ հայոց ճեմարան բացելու համար»⁵²:

Մինաս Տեր-հաշատրյանը էջմիածնից վերադառնալիս եղել է Պոլսում և բարեկամական կապեր հաստատել տեղի հայ ազգային, հասարակական մի շարք գործիչների հետ: Հատկապես ջերմ և մտերմական կապեր են ստեղծվել նրա և «Մասիս» թերթի տնօրեն, խմբագիր Կարապետ Յուսուբյանի միջև: Հեռավոր Մանդալայում Մ. Տեր-հաշատրյանը պարբերաբար ստացել է «Մասիսը»: Ինչպես երևում է Կ. Յուսուբյանին ուղարկած մի նամակից, հայերեն թերթի այն հոդվածները, որոնք կարող էին հետաքրքրություն ներկայացնել Բիրմայի թագավորի համար, հայ պալատականի կողմից թարգմանվել և տրվել են նրան կարդալու. «...լրագիրներդ ամենայն ժամանակ կթարգմանեմ բերմերեն և վեհափառ թագավորին կտամ կկարդա և շատ հավանում է...»⁵³: Բիրմայի թագավորին առաջին հերթին հետաքրքրել են «Մասիսի» այն հոդվածները, որոնք վերաբերում էին Միջին Ասիայի, Աֆղանստանի, Հնդկաստանի սահմանակից երկրներում տեղի ունեցող քաղաքական անցուղարձին:

⁴⁹ Նույն տեղում:

⁵⁰ Նույն տեղում:

⁵¹ Նույն տեղում:

⁵² Նույն տեղում:

⁵³ Նույն տեղում, 23 փետրվարի 1876:

Այնքան մեծ է եղել Բիրմայի գահակալի հետաքրքրությունը «Մասիսի» նկատմամբ, որ նա դարձել է հայկական թերթի բաժանորդը: Այդ մասին Մ. Տեր-Խաչատրյանը Կ. Յութուջյանին գրել է. «Նորին վեհափառությունն լրագրույդ մեջեն թարգմանյալ հոգվածները կարդալով յուր բարձր հավանությամբ պատվյալ է... հատկապես բաժանորդագրվել լրագրույդ...: Թագավորն ինձ հրաման տվավ, որ Ձեր «Մասիս» լրագիրն բերել տամ: Յուր ձեռամբն շորս հատ բերական ոսկի տվեց ինձ նորին վեհափառությունն, որ Ձեզ ուղարկեմ»⁵⁴: Ոսկի դրամների հետ Մ. Տեր-Խաչատրյանը նամակ էր ուղարկել Կ. Յութուջյանին՝ գրելով. «Դիտեմ, որ Բիրմական ոսկին տեղտ ծախս չի երթալ, բայց ես երկու աղագավ ուղարկեցի, առաջին՝ որ վեհափառ թագավորն յուրով ձեռով տուած է և մին անթիքայլ պես բան լինելու աղագավ»⁵⁵: «Մասիս»-ում տպագրված հաղորդագրություններից մեկից իմանում ենք, որ Մինդոն թագավորի անունից հայկական թերթի բաժանորդագրության համար ուղարկած ոսկիները հասել են Կ. Յութուջյանին: Վերջինս, տպագրելով Մ. Տեր-Խաչատրյանի նամակը Բիրմայի թագավորի «Մասիսի» բաժանորդ դառնալու մասին, ավելացրել է, որ ինքը այդ ոսկի դրամները ստացել է, տեսնել ցանկացողները կարող են անցնել թերթի խմբագրություն:

Մինդոնի հետաքրքրությունը «Մասիսի» նկատմամբ հասել է այն աստիճանի, որ Բիրմայի գահակալը Կ. Յութուջյանին պարգևատրել է բիրմական հատուկ շքանշանով և թագավորական հրովարտակի հետ ուղարկել Կ. Պոլիս: Արքունական հրովարտակի բառացի թարգմանությունը, որը բիրմերեն պատճենի հետ «Մասիսի» խմբագրին է ուղարկել Մինաս Տեր-Խաչատրյանը, հրատարակվել է թերթի 1877 թ. ապրիլի 12-ի համարում: «Նորին արքայական վեհափառության կողմանն մեղի ցույց տված այս պատվուն համար,—գրում է «Մասիսի» խմբագիրը,—մեր խորին շնորհակալությունը կրփուկանք հայտնել հրապարակավ, մանավանդ, որ այս պատիվն, յուր հարակից պարագայներովն ավելի մեծ արժեք ունի մեր առջև: Նախ որ նորին վեհափառությունն հեթանոս կրոնքն ըլլալով, մասնավորապես մեզ հաճելի ըլլալու համար քրիստոնական կրոնի նշան մը ուզեր է մեզի ընծայել, երկրորդ, որ, ինչպես ստուգած ենք, Պիրմանիո թագավորը մինչև ցարդ հրամանագրով պատվանշան տալու սովորություն չունենալով, այս անգամ բացառիկ կերպիվ արքունի հրովարտակավ ևս պատվել բարեհաճեր են դմեզ»⁵⁶:

Կ. Յութուջյանը իր թերթում տպագրել է նաև իրեն շքանշանով պարգևատրելու բիրմերեն հրովարտակի հայերեն թարգմանությունը. «Ամենաբարձր և ամենազոր վեհափառ արքայ Բրմայից, որ իշխե ի վերա ցամաքից և ջրոց, տեր ծագման արեգական, տեր երկնային փղի, տեր սպիտակ փղի և տեր արդար իրավանց. շնորհե Կարապետ Կ. Յութուջյան, բնակյալ ի Կ. Պոլիս Թուրքիո, խմբագիր և հրատարակող «Մասիս» լրագրո հայոց, իաչ մի ոսկի օրինակյալ հակինթ ակամբ: Ի թվին Բիրմայից հավատո 2470, որ է ներկա թվական 1233, Տրուան ամսույն 13. համեմատությամբ քրիստոնեից 1877 ամին փետրուար ամսույ 24»⁵⁷: Կ. Յութուջյանին բիրմական հատուկ շքանշանով պարգևատրելու հրովարտակը հաստատված է եղել «Կնիքով ոսկվո սիրամարգի Բրմայից տերության» ապա նաև Մինդոնի լրիվ ստորագրությամբ՝ «Ամենաբարձր և ամենազոր վեհափառ արքայ և տեր և թագավոր ի վերա Բիրմայի տերության և տեր ծագման արեգական»: Հրովարտակի տակ կա նաև Բիրմայի արտաքին գործերի մինիստրի՝ «Կինվուն Մինչի Մինդրոտո Մինչի Մըհա Մինլահ Մեգոգեո» ստորագրությունը⁵⁸:

Մինդոնի «Մասիսի» բաժանորդ դառնալու և նրա խմբագրին շքանշանով պարգևատրելու լուրը տպագրել են նաև ժամանակի մի քանի այլ թերթեր:

⁵⁴ «Մասիս», 23 փետրվարի 1876:

⁵⁵ «Մասիս», 14 ապրիլի 1877:

⁵⁶ Նույն տեղում:

⁵⁷ Նույն տեղում:

⁵⁸ Նույն տեղում:

Այսպես, «Փորձը» զարմանքով է գրել, որ «Բիրմանիո օգոստոսափառ գահակալն ուղարկելով պետք եղած դրամը բարեհաճել է ստորագրել այդ լրագիրն իր անվամբ»: «Փորձը» իր ընթերցողներին միաժամանակ հայտնել է, որ Բիրմայի թագավորը «առանձին հրովարտակով շնորհել է պարոն Յուսուֆյանին մի ոսկեձե շքանշան, որ յատուկ պատրաստել էր տվել այդ դեպքի համար...»⁵⁹:

Անշուշտ հետաքրքիր պետք է համարել նաև այն փաստը, որ գրեթե նույն ժամանակ Մինդոնը ինչ-որ ճանապարհով թերթ է ստացել նաև Ռուսաստանից և ուշադիր հետևել է միջազգային ասպարեզում Ռուսաստանի վիճակին: Ի դեպ, այս մասին անհանգստացած հայտնում են Բիրմայի կառավարության հետ բանակցություններ վարելու համար Մանդալայ եկած անգլիական պատվիրակության ղեկավարները:

Այժմ անդրադառնանք այն նամակներին, որոնց մասին խոսք եղավ վերևում: Դրանցից առաջինը Մինաս Տեր-Խաչատրյանի ձեռքով հայոց Գևորգ Դ կաթողիկոսին ուղարկած Մինդոնի նամակի պատասխանն է: Գևորգ Դ կաթողիկոսը նամակի սկզբում առաջին հերթին իր խորին շնորհակալությունն է հայտնել Բիրմայում ապրող հայերի նկատմամբ բիրմական կառավարության և թագավորի ցուցաբերած հոգատարության ու հովանավորության համար: Կաթողիկոսը գրում է. «Ստանալով Ձեր նամակը ախորժ հաճությամբ ընթերցա, որ հայտնեի զՅուսուֆյանի կողմանց վասն պանդխտելու այտր մեքսայաց, ուստի աղաչեմ ընդունել զանկեղծ և սրտագին շնորհակալություն սակս հայրագործ խնամաց և համակրական և սիրալիր զգացմանց աստված շնորհելոց առ հայազգի որդիս իմ, որոնք են հավատարիմ հպատակք ընդ բարեգութ իշխանության Ձերով և վայելեն զավուրն հորդորության» հավետ օրհնելով զկյանս Ձեր»:

Այնուհետև Գևորգ Դ-ը հայտնում է Մինդոնին, որ սիրով է կատարում Մանդալայում հայ հոգևորական տեսնելու նրա ցանկությունը և ուղարկում է Դրեգորիս արքեպիսկոպոսին «ի տեսութիւն վեհափառ արքայիդ. ընդ որում բարեհաճեսցիք խորհիլ և խօսիլ, զի ուղղակի մեղ հաղորդեսցի»: Նամակի վերջում Գևորգ Դ կաթողիկոսը հույս է հայտնել, որ «գրաբերս հայազգի Մինաս Գրիգորեան Տեր-Խաչատրեանը, որ պատմեց մեզ լինել հանձնարարական ծառայից Ձերոց և եկեալ էր այսօր առ մեղ թարգման լիցի սիրոյն և համակիր զգացմանց իմոց առ Վեհափառ Թագաւորութիւն Ձեր»⁶¹:

Երկրորդ փաստաթուղթը, որն ունի պատմական մեծ արժեք, Բիրմայի ինքավոր Մինդոնի անունից երկրի արտաքին գործերի մինիստր Կինկուն Մին-ջիի գրած նամակն է Գևորգ Դ կաթողիկոսին: Նամակը մեզ է հասել բիրմերեն, հայերեն և ֆրանսերեն լեզուներով: Նամակի հենց սկզբում Բիրմայի արտաքին գործերի մինիստրը առանց դիվանագիտական խաղի հայտնում է, որ իր թագավորը «չերմագին փափագանօք կամեցեալ կռել դաշն բարեկամութեան ընդ ռուսս», որի համար թագավորն ամեն ինչ արել է: Նա ջերմ ընդունելություն է ցուցաբերել Բիրմա հասած ռուսական քաղաքացիներին, որոնց միջոցով իր զղացմունքներն է հայտնել ռուսական կառավարությանը⁶²: Այնուհետև հայտնելով է, որ դեռևս 1873 թ. Բիրմա այցելած ռուսական հպատակ Օպարինին «բազում հաճութեամբ ընդունելութիւն մեծ արարեալ յանձն արար նամակ մի, յորում զիղծս սրտին բացեալ յայտ առնէր, զի մի ոմն ի բարձրագոյն աստիճանավորաց եկեղեցւոյն Հայոց հաճեսցի գալ ի Պիրմանայ»⁶³: Մինիստրը միաժամանակ տեղյակ է պահում կաթողիկոսին, որ նրա՝ Մինաս Տեր-Խաչատրյանի հետ ուղարկած նամակը և վեհափառ լուսանկարը հասել են տեղ

59 «Փորձ», Թիֆլիս, 1882, № 26, էջ 415:

60 I. G. E. Hall. Europe and Burma, a study of European relations with Burma from the Earliest Times to the Annexation of Thibaws Kingdom. London. 1945, p. 371.

61 Մաշտոցի անվան Մատենադարան (ՄՄ). Կաթողիկոսական դիվան, թղթ. 227, վավ. 244:

62 Նույն տեղում, թղթ. 224, վավ. 245:

63 Նույն տեղում:

և մեծ բերկրանք պատճառել «նորին վեհափառության» (Մինդոն թագավորին—Ռ. Ա.)⁶⁴։

Բիրմական կառավարության և Հայոց Գևորգ Դ կաթողիկոսի գրագրության և նրա բովանդակության մասին, անշուշտ, գիտեին ռուսական արքունիքում և արտաքին գործերի մինիստրությունում։

Թե ի՞նչ ճանապարհով են Գևորգ Դ-ը և Գրիգորիս արքեպիսկոպոսը Բիրմայից ստացած գրությունները հասցրել ռուսական կառավարությանը՝ հայտնի չէ։ Դատելով Գրիգորիսի՝ կաթողիկոսին ուղղված մի քանի նամակներից, այդ ուղիներից մեկը եղել է Թեհրանի ռուսական դեսպանը, որի հետ հաճախ հանդիպումներ և զրույցներ է ունեցել իրանա-հնդկական թեմի առաջնորդը։

Ցարական Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրության գեպարտամենտի գործերի կառավարիչ Ն. Կ. Գիրսի մի ղեկուցագրից՝ ուղղված Դ. Ա. Միլյուտինին, երևում է, որ նրա մոտ մի շարք վայրերից, այդ թվում նաև էջմիածնից և Թեհրանից, մի քանի նամակներ և խնդրագրեր են հավաքվել, որոնցում բիրմական կառավարությունը Ռուսաստանին ռուս-բիրմական դաշինք է առաջարկում⁶⁵։ Հայտնելով այս բոլորը, Ն. Կ. Գիրսը Դ. Ա. Միլյուտինին խորհուրդ է տվել քաղաքավարի կերպով խուսափել դրական պատասխանից, այնպես, ինչպես ժամանակին վարվել է Ա. Մ. Գորչակովը⁶⁶։ Իհարկե, ոչ թե Ն. Գիրսի խորհուրդը, այլ Ռուսաստանի համար ստեղծված միջազգային բարդ դրությունն էր, որ հնարավորություն չտվեց Ռուսաստանին դաշինք ստեղծել Բիրմայի հետ, որը հակաանգլիական բնույթ էր ունենալու։

Թեև Գրիգորիս արքեպիսկոպոսի առաքելությունը և ջանքերը արդյունք չտվեցին, ռուս-բիրմական դաշինք այդպես էլ չկնքվեց, այնուամենայնիվ նոր Զուլայի հայոց հոգևոր առաջնորդը իր ծառայությունների համար արժանացավ ռուսական կառավարության բարձրագույն շքանշանի։ Այդ մասին Գրիգորիս արքեպիսկոպոսը կաթողիկոսին գրած մի նամակում հայտնում է. «Նորին գերազանցութիւն միսիւ Մելնիքով դեսպան Ռուսաց, որ ի Թեհրան հեռագրական նամակաւ ատեալ է շնորհաւորել ինձ թէ նորին վեհափառութիւն և Ինքնակալ Ալեքսանդր Գ Կայսրին Ռուսաց բարեհաճեալ է ամենաողորմածաբար պարգևատրել ինձ զառաջին աստիճան շքանշանի սրբոյն Աննայի...»⁶⁷։

Այդ նամակից իմանում ենք նաև այն մասին, որ պարգևը նոր Զուլայ է հասցրել ռուսական դեսպանատան հատուկ պաշտոնակատարը։ Ռուսական պետության բարձրագույն շքանշանը հայ հոգևորականին է հանձնվել մեծ շուքով՝ ռուսական դեսպանության աշխատողների, պարսկական կառավարության պաշտոնական անձանց և հայ գաղթօջախի աչքի ընկնող ներկայացուցիչների ներկայությամբ⁶⁸։

1870-ական թթ. կեսերին հայկական մամուլում հոգվածներ էին լինում Բիրմայում ապրող հայերի նկատմամբ երկրի գահակալի և ժողովրդի ցուցաբերած ջերմ, հովանավորող քաղաքականության մասին։ Շատ հոգվածագիրներ զարմանք էին հայտնում և չէին կարողանում բացատրել նման երևույթի պատճառը։ «Փորձում» տպագրված հոգվածներից մեկում կարդում ենք. «Սուրանից վեց-յոթ տարի առաջ Հնդկաստանի Բիրմանիո թագավորը, ինչպես հայտնի է, մի զարմանալի սեր և համակրություն ցույց տվեց դեպի հայոց ազգը։ Նա առանձին պատգամավորների ձեռքով հրավիրեց այցելել իրձն այն ժամանակը Հնդկաստան գնացող Գրիգորիս արքեպիսկոպոսին ու սրան մեծ պատվով և ընծաներով ընդունեց»⁶⁹։ Անդրադառնալով Բիրմայի հայկական

⁶⁴ Նույն տեղում։

⁶⁵ ЦГВИА СССР, ф. 401, 1876 г., д. № 20, л. 41.

⁶⁶ Նույն տեղում։

⁶⁷ ՀՄՄՀ ՊԿՊԱ, ֆ. 56, ց. 1, գ. 6, էջ 22։

⁶⁸ Նույն տեղում։

⁶⁹ «Փորձ», Թիֆլիս, 1882, № 26, էջ 415։

գաղթօջախներին, հողավածի հեղինակը գրում է. «Բիրմայի թագաւորին սերը և համակրութիւնը տեղիք է տվել ժողովելու հայերին Բիրմանիո Մանդալայ թագավորանիստ քաղաքը և նշանավոր դեր խաղալ»⁷⁰: Բանը հասել է այնտեղ, որ առանձին հայկական թերթեր չափադանցրել են լուրերը, իբրև թէ «Բիրմայի թագավորը տրամադրված է թողնել յուր կրօնը և ընդունել սուրբ մկրտութիւնը մեր եկեղեցու օրենքով»⁷¹:

Հողավածներից մեկի հեղինակը հպարտությամբ է նշում, որ Բիրմայի հայերը «նույս պիտանի» են եղել «ի ժամանակի պատերազմի անգղիացվո», և մեծապես օգնել են Բիրմայի պետությանը:

Բիրմայից ուղարկված մի թղթակցութեան հեղինակը անդրադարձել է նաև Մինդոն թագավորի և Գևորգ Դ-ի գրագրութեանը և ճիշտ կռահել նրա իմաստը. «Թվի ինձ լինել անդ հեռատես իմն խորհուրդ քաղաքական, ըստ կարծյաց իմոց նպատակ նորա (Մինդոն թագավորի—Ռ. Ա.) էր զի միջնորդութեամբ նորին սրբազանութեան բանայցի զբարեկամութեան հաղորդակցութեան ընդ կայսերն Ռուսաց»⁷²:

Նման հետաքրքիր շատ փաստեր կան արխիվներում և մամուլում նաև Բիրմահայ գաղթօջախների պատմության հաջորդ ժամանակաշրջանի վերաբերյալ:

ИЗ ИСТОРИИ АРМЯНСКОЙ КОЛОНИИ БИРМЫ

Доктор ист. наук Р. А. АБРАМЯН

Резюме

Армянские общины, возникшие в Бирме еще в начале XVI века, в XVII—XVIII вв. играли определенную роль в экономической и торговой жизни страны. Они вели торговлю с иностранцами и выполняли дипломатические поручения бирманских правителей.

Когда в середине XIX века усилилась опасность новой агрессии Англии против Бирмы, правитель страны Миндон (1853—1878) с целью создания антияноглийского союза стал искать пути для установления контакта с Россией. Миндон посредником для создания такого союза по совету бирманских армян выбрал католика всех армян Георга IV. С этой целью со специальным письмом в 1873 г. в Эчмиадзин прибыл представитель бирманского двора Минас Тер-Хачатурян. В свою очередь в 1873 и 1875 гг. в Мандалай прибыл представитель Эчмиадзина архиепископ Григорий. Он был принят с большими почестями. С ним вели переговоры сам Миндон и министр иностранных дел Бирмы. Как во время переговоров, так и в специальном письме, отправленном в Эчмиадзин, Миндоном был затронут вопрос о заключении союза между Бирмой и Россией по ходатайству Георга IV.

70 Նույն տեղում:

71 Նույն տեղում:

72 «Առյուս», Կ. Պոլիս, 1875, № 178—179: